


# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր
# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

## 1959 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեցին Ռումինիայի և Բուլղարիայի թեմական խորհուրդների պաշտոնական դիմումները՝ երկու թեմերի համար առաջնորդ նշանակելու մասին։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ընդառաջելով Ռումինիայի և Բուլղարիայի թեմական խորհուրդների դիմումներին, խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ երկու թեմերի համար առաջնորդ հաստատել Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանին։*

*Վեհափառ Հայրապետը հաստատեց Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումը։*

## 1959 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Մայր Աթոռի 1959 թվականի ընթացքում կատարված շինարարական աշխատանքների և 1960 թվականի ծրագրերի մասին զեկուցեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը, մի շարք դիտողություններից հետո, գոհունակությամբ ընդունեց զեկուցագիրը և առաջարկեց Մայր Աթոռի տնտեսական վարչության և գլխավոր ճարտարապետին՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, առաջիկա շինարարական տարում ևս, ըստ նախատեսված ծրագրի, առաջ տանելու համար շինարարական աշխատանքները։*

## 1960 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Շիրակի թեմի 1959 թվականի տարեկան համարատվությունը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պր. Ե. Ալեքսանյանի զեկուցման հիման վրա։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ մանրակրկիտ քննության, որոշեց հաստատել համարատվությունը։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը միաժամանակ խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ նոր թեմակալ առաջնորդ նշանակել Շիրակի թեմի համար։*

## 1960 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5–Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում առանձնապես քննության առավ և հաստատեց 1960 թվականին Վեհարանի նոր շենքի վերանորոգման և բարեզարդման շինարարական աշխատանքների ծրագիրը։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով հունվարի 20-ի նիստում Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից կատարված խընդրանքին, Շիրակի Թեմի համար առաջնորդական փոխանորդ նշանակեց Մայր Աթոռի միաբան Հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանին։

## 1960 Թ. ՄԱՐՏԻ 8–Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Գ. Քեհյայանը զեկուցեց ներքին Թեմերի 1959 թվականի բյուջեի կատարողականի և 1960 թվականի նախահաշիվների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հաստատեց ներքին Թեմերի բյուջեի 1959 թվականի կատարողականը, իսկ մի շարք դիտողություններից և առաջարկություններից հետո հաստատեց 1960 թվականի նախահաշիվները։

